

ՄԱՏԵՆԱԻՇՈՍԱԿԱՆ

ԴՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

ԱՐԾԱԿ ՏԵՐ ՄԻՔԵԼԵՍՆ. Ուսումն սուրբ գրոց. (Ներածութիւն) Ա. նախաձեռնարկ Հոգեոր գպրոյների և ս. Գլըքի ընթերցաւէրների համար. Թիֆլիս. 1900. Հարաձէի տպ. գինն է 1 ռ. 8^o. 231.—ԱՐԵՍՏԱԿԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ (ՍԵԴՐԱԿԵՍՆ). Քահանայական խնդիր, համառօտ ակնարկի. Մոսկով. տպ. Հերբէկի 1900. 8^o եր. 220. գինն է 1 ռ.—Հ. Ս. ԷՓՐԻԿԵՍՆ. Պատկերազրդ բնաշխարհի բառարան, պրակ առաջին. Վենետիկ, Ս. Ղազար, 1900. 8^o. 160 եր. գինն է 1 ռ.—ԼԵՆԻՈՆ ՄՍԵՐԵՍՆ. Հայերէն բարբառախօսութիւն, ներածական ճառ, թարգմ. ի ռուսերէնէն չ. Գ. ՄԵՆԵՎԼԻՇԵԱՆ, ի Մի. ուխտէ. Վիեննա, Միլժ. տպ. 1899. գինն է 50 սանտիմ. փոքրադիր 8^o եր. 30.—ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆՆԵԱՆՑ. ՄԵԼիք-Խւսուֆ, պատմական պօէմա (1728—1750), Թիֆլիս, տպ. Հարաձէի 1900. փոքրադիր 8^o. 30 եր.—ՄԵԼԻՔ Ս. ԴԱՒԹ-Բէկ. Լուսինեանը, Վիեննա 1900. Միլժ. տպ. 8^o. եր. 144.—Կ. ՏԻՄԻՐԵԱԶԵՎ. Հարլի Դարվին, թարգմ. Ս. Տէր-Գասպարեանի 1900. Բագու, տպ. Գիւլյասարեանի 1900. 8^o եր. 66. գինն է 25 կ.—ՑԱԿՈԲ ԱՐԵՆ. Ազատ ժամեր, Թիֆլիս, տպ. Հարաձէի. 1900. 8^o եր. 172.—Յ. ՏԵՐ ՄԻՐԱՔԵՍՆ. Դեռահաների ազատ ընթերցանութիւնը, 190 յանձնարարելի ու մերժելի գրքերի ցուցակով, Թիֆլիս, տպ. Ռոտինեանի 1899. 8^o եր. 229. գինն է 60 կ.—ԲԺՇԿ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻՆ, Թշուառների բարեկամ բժիշկ Հասպ, փոփ. ռուս. Թիֆ. 1900. տպ. Ռոտ. Հրատ. Հայոց Հրատ. ընկեր. № 180. գինն է 20 կ. փոքրադիր 91 եր.—Դ. ՄԱՄԻՆ-ՑԱՐԻ-ՐԵԱԿ. Պառաւ ծիտը, թարգմ. ռուս. Եղիսաբետ Սարգսեան, № 10 Հրատ. Ա. Պօղոսեանի գում. գինն է 3 կ. 8^o եր. 18. տպ. Մ. Մարտիրոսեանի 1900.—Վ. Պ. ԱԼԵՆԱՐԻՈՒՆ. Ի՞նչ է առում սենեակը, թարգմ. Զ. Տ.-Դ. Թիֆ. տպ. Մ. Մարտ. 1900. 8^o եր. 27. գինն է 10 կ. № 11. Հրատ. Ա. Պօղոսեանի գում.—Տ. ԻԹԻՒՃԵՍՆ. Առաջնորդ առողջապահութեան, Ա. Հատոր. Առամունը, Բ. տպագր. Կ. Պոլիս 1899. փոքրադիր եր 52. գինն երեք դաշեկան.—Բժ. ՄԻՄԷԿՈՆ ՀԱՀ-ՆԱԶԱՐԵՍՆ ՀՄՀ (25-ամեակի առթիւ) 189^o/₁, թ. թ. կուսակցական պայքարը. Մոսկով, տպ. Բարթուլարեանի 1900. 8^o եր. 98. գինն է 1 ռ.—Միլրագրական քննադատութեան առթիւ—Ամսագիրներ:

Հայկական գրականութեան կրօնական դրոշմ կրելու մտսին շատ է գրուած. արդէն իսկ պատմական փաստ է, որ հայկական գրականութիւնը ծնունդ լինելով եկեղեցական պիտոլքի, սնուել ու զարգացել է դարերի ընթացքում կրօնական ոգևոր, նոյն ոգին տիրապետող է եղել և անցած դարում, որ ընդհանուր պատմական տեսակէտով ազատ էր կրօնական ուղղութիւնից և կրում էր գիտնական դրոշմ, ուստի և շատերը կոչում էին այդ դարը լուսաւորութեան դար: Այդ լուսաւոր դարու ազգեցութիւնը սակայն տարբեր էր զանազան ազգերի վրայ. մեր ազգը, որ միշտ հետևորդի դեր է կոտարել պատմութեան մէջ, այս անգամ ևս հաւատարիմ մնաց իւր ընթացքին և լուսաւորութեան ուղին բռնելով՝ հեռուից, շատ հեռուից հետևեց առաջադէմ մարդկութեան: Տասննիններորդ դարում հայ գրականութիւնը ալնպիսի բազմադիմի չփռումներ ցոլց տուաւ, որ նա երբէք չէր ունեցել, սակայն նա չը թողեց և իւր նախնական ընթացքը, որի մէջ գտնուում է շնորհիւ պատմական հանգամանքների: Հայ եկեղեցն դեռ ևս աւանդապահ է մեր լեզուի և ազգայնութեան և ովք գիտէ, թէ դեռ բնչքան ժամանակ պիտի մնայ միայնակ ապաստանարան այդ սուրբ աւանդների եկեղեցին լեզուի իննդրում մինչև իսկ աւելի աւանդապահ է, քան թէ ցանկալի կարող է լինել, բայց զուրկ չէ և յառաջադիմական քայլերից, որոնք առհաւատչեայ են ապագայի մեծագոյն բարեխների: Մինչդեռ մինչև անցած դարու կէսը գրաբար լեզուով միայն կարելի էր կրօնական և եկեղեցական ինդիրների մասին գրել, ալժմ աստուածաբանական, զուտ կրօնական և եկեղեցական ինդիրների մասին բազմաթիւ աշխարհաբարերկեր ունենք: Այս առաջին քայլն էր դժուարինը, ուրին անշուշտ կը հետևեն շատ այլ քայլեր:

Գրիստոնէական կրօնի ճշմարտութիւնների աղքիւր և Գիրքը դեռ ևս անմատչելի է մեր ժողովրդին, բայց արդէն իսկ մեծ աշխատանք է գործ դրուած, որ Դիրքը մատչելի լինի ժողովրդին, անթիւ աշխարհաբարդասագրքեր և մեկնողական գրուածներ նախապատրաս-

տում են ալդ վախճանական մեծ գործը։ Այս հայեցակետով ողջունել պէտք է պ. Տէր Միքելեանի «» Գրոյնուանան, որ մի նոխագուռն է Ա. տուածաշնչի հնագոյն և հիմնական գրքերի մեկնութեան և լմբանողութեան։ Արգոյ հեղինակն այս Ա. հատորում երկու հատուածով ծանօթացնում է նորավարժներին Աստուածաշնչի նշանակութեան և Հոգամատեանի հետ, որ հին օրէնքի հիմքն է, ալսու նահապատրասուտում է նա և նոր կտակարանի ըմբունումն։ Այսպ'սի մեկնողական շարագրութիւնները հնար կը տան մեր հոգեօրականութեան գուրս գալու միջնորդարեան սփռաստիւ մեկնութիւնների շըջանից, որ գեւ ևս միակ տիրտպետողն է։

Այստեղ անւարմար է և հոկառատկ իսկ ակնարկներիս նպատակին մի առ մի խօսել հեղինակի հայեցքների և մեկնութիւնների մասին, ուստի պիտի շատանամ հետեւեալ երեք ընդհանուր դիտողութեամբս, ա) նորավարժներին և համբակներին ուսուցանելու ուղիղ ճանապարհն է թանձրացեալ նիւթից չը հեռանալն և վերացտկանից խուսափելը, այս պս տճառով, կարծեմ թէ հեղինակն աւելի լաւ կանէր, որ նախ ուսուցանէր և ապա այնպիսի վերացական և դժուարին խնդիրների քննութիւնների մասին խօսէր, ինչպիսիք են ս. Գրքի գրական արժէքը, ս. Գրքի բացասական քննաբանութիւնը և այլն գրեթէ ամբողջ առաջին հատուս ծն, որ ինքը կոչում է «ընդհանուր պետական»։ Երկրորդ դիտողութեան արժանի կէտն է արգոյ հեղինակի գործս ծածլեղուն, որ ձգտում է սովորականից գուրս, արհեստական ձեւերի կիրառութեան, պարզութիւնը ոճի զարդըն է, մանաւանդ վարդապետող, ուսուցանող ոճի։ Դիտողութեանս երրորդ կէտը վերաբերում է հեղինակութեան աղբիւրներին, որոնց մասին արժէր նախարանի մէջ լիշտակել, որպէս զի նիւթի գիտնական արժէքը միանգամից ակնյալտնի լինէր. ոչ մի հեղինակ, մանաւանդ զիտնական հեղինակ անընդհատ և ինքնուրոյն գիւտեր չէ անում, այլ օգտուում է ուրիշների երկարատեւ և տքնաջան աշխատանքից, ուստի ամօթաբեր չէ օգտուիլն, այլ պէտք է գիտենալ որպիսի

աղբիւրներից պէտք է օգտուիլ, որոնց անունն ևս քա-
ջութեամբ կարելի է տալ:

Կրօնական վարդապետականից անցնելով եկեղեցա-
կան կանոնականին և վարչականին, պիտի արձանա-
գրենք «Քահանայական խնդիր» մակագրութիւն կրող
մի շարադրութիւն, որ մեր ալժմեան հրապարակա-
գրութեամ մենավաճառների բանակում մեծ դդրդիւ-
նով հոչտակութեցաւ: Այդ երկի հեղինակն է Արիստակէս
(ինչպէս ի զգուշութիւն յալտնում է վերնագիրն, Անդ-
րունիան, և ոչ այլ ոք Արիստակէս) եղիսկոպոս, ինչու ոչ
արքեպիսկոպոս, քանի որ Սեղբակեան սրբազանը շատ ժա-
մանակ է, որ վայելում է արքունիւնն պատիւը: Համես-
տութիւնը կրօնաւորի առաքինութիւն է, ուրեմն ար-
դարացի է կարծել, որ հեղինակը գիտմամբ արքեպիս-
կոպոս չէ ստորագրել, ոչ ապաքէն մեր նշանաւոր մա-
տենագիր Յովհան Սարկաւագն ևս չը նայելով իւր ե-
պիսկոպուտական աստիճանին, կոչում է իրեն Սարկաւագ:
Անշուշտ նոյն հոգւով քննած կը լինի հեղինակն և մեր
եկեղեցական խնդիրներից այս գժուարագոյնը, մտա-
ծում է ընթերցողն և բաց անում գիրքը: Սակայն ինչ
հակասութիւն, ամբողջ շարագրութիւնը, որին մի լրա-
գրող իրշար Տերէացուներ անունը տուաւ, մի ամբաստա-
նագիր է մեր այս դարու մեռած և կենդանի հոգևո-
րականութեան դէմ: Ինչպէս յալտնի է ամեն ամբաս-
տանագիր ճշմարտութիւն չէ և ինչպէս գիտեն ամեն-
քը, ամեն գտատիւազ ևս երկնքից իջած: լուսափայլ
հրեշտակ չէ: Սակայն մի կողմ թողնենք մեր զգացածը
թէ վրդովեցուցիչ իրողութիւնների և թէ մեռածների
այս անօրինակ քարկոծութեան դէմ և ծանօթանանք
գրքի բովանդակութեան հետ ինչքան այս տեղը և մեր
նպատակը կը ներէ:

Արիստակէս սրբազանն իւր երկն սկսում է այն
օրուան անցքերից, երբ ինքը մտել է վարչական աս-
պարէզ և նկարագրում է իւր ամբողջ գործունէութիւ-
նը մինչև վերջին օրերս, այնպէս որ այս շարագրու-
թիւնը մի կողմից քո ձօտո տո է գրուած, միւս կող-
մից մի հեռանկար է ընթերցողի աշքի առաջ այն դէ-

պուածի համար, երբ մեր եկեղեցին կունենալ մի այն-պիսի Հովուապետ, ինչպիսին ինքն է: Այս երկու գիտաւորութիւններն ևս պախարակելի չէին լինիլ, եթէ զերապատիւ հեղինակը խնայած լինէր մեր անցեալ և ներկալ եկեղեցականութեան ներկալացուցիչներին, բայց մեծ վշտով պիտի արձանագրենք, որ արդու հեղինակը մեծ տեղ է տուել մութն ակնարկներին, որոնց հարկաւ չեն կարող պատասխանել մեռած գործիչները:

Եր. 39 տող 7. «Պարձենալով կարող ենք ասել, որ եկեղեցական կարգապահութեան և հպատակութեան կողմից Երիէք չենք թերացելու. գրում է սրբազանն, բայց իւր երկի ամեն մի էջ դրա հակառակն է վկայում: Նոյն իսկ իւր գործունէութեան առաջին քայլը, երբ նա Զալյալեանց Սարգիս եպիսկոպոսի ձեռքի տակ լինելով և Նուխուալ գիւղարի հոգեւոր վիճակը քննելուց յետու, դիմում է ուշացնել սինօդին, մի անկարգապահութիւն և իւր մեծաւորի դէմ դատախազութիւն է, մինչդեռ նրա պարտքն էր զեկուցագիր տալ իւր մեծաւորին և նրանից դարման խնդրել և ոչ թէ մեծաւորից բարձր իշխանութեան առաջ սեացնել նրան: Նոյն ընթացքը նկարագրում է Սրբազանը և վերաբերութեամբ իւր Տաթևի յաջորդութեան, նոյնն է պատմում ինքը և վերաբերութեամբ իւր Թիֆլիզի առաջնորդութեան և սինօդի անդամութեան մասին: Այն չարիքը, որի դէմ ինքն իբրև առաջնորդ մաքառում է, գործ են իւր նման ստորագրեալների, ահա մի խոշոր խնդիր, որ աչքաթող է արել Սրբազանը քահանայական խնդրի քննութեան ժամանակ: Եթէ քահանան ըմբոստ է յաջորդի դէմ, յաջորդն առաջնորդի, առաջնորդը սինօդի և սինօդն Հայրապետի, այնտեղ չէ կարելի արդիւնաւոր գործի ակընկալութիւն ունենալ:

Մի առանձին և վշտացուցիչ վիպասանութիւն է գերապատիւ հեղինակի Թիֆլիզի առաջնորդութեան պատմութիւնը, որ սկսուում է բամբասանքներից և վերջանում բամբասանքներով (տես. Եր. 11 և 12 և այլն): Այս խնդրում երկու աշքի ընկնող կէտ կալ, մէկն այն է որ հեղինակը ճգնում է ցոլց տալ, որ Թիֆլիզի թեմի

Հոգեւոր վիճակն անչափ ընկած էր իրենց առաջ և զրապատճուը Մակար ւրբազտնի առաջնորդութիւնն է եղել, երկրորդ որ երբ ինքն ուզեցել է վիճակը բարեկարգել, իրեն արգելք են եղել սինօդն ու կաթուզիկոսը:

Թողնենք այն հանգամանքը, որ իրենից առաջ և Մակար Սրբազնից լսույթեմն ուրիշ և իւր իսկ խոստովանութեամբ մի շատ արժանաւոր առաջնորդ է ունեցել, որի գործունէութեան մասին ոչինչ չենք լսում, այէտք էր վիճակագրական եղանակով ապացուցանել նախկին թեմակալի ապարդիւն և վնասակար գործունէութիւնը և ոչ թէ «ասէ, կոսէ» ներով։ Եթէ հեղինակն այդ ուղին բոնտծ լինէր՝ մի կողմից կ'երևէր, որ նախկին թեմակալը մի շատ սւելի, բազմապատիկ վատթար վիճակ էր ժառանգել քան ինքը և երկրորդ՝ անհերքելի փաստեր կ'ունենալինք նախկին առաջնորդի գործած գեղծումների մասին, ապա թէ ոչ, այսպիսի խօսքեր, թէ «այէտք էր տալ առատ աջահամբուր առաջնորդին», «գարձեալ աջահամբուր» և այլն կոչուում են բամբասանքներ։ Ես չեմ ցանկանում նախկին առաջնորդին բոլորովին սպիտակացնել, բայց համոզուած եմ, որ նրա ժամանակ անուսների ձեւնագրութեան շարքում եղել են արժանաւոր ձեռնադրութիւններ և վիճակագրութիւնը գոյց է տալիս, որ հէնց այդ առաջնորդի ժամանակ Վրաստանի թեմում բազմաթիւ ներսիսեան դպրոցից աւարտածներ են ձեռնադրուել. ամբողջ թեմի վարչութեան գնահատութեան համար քիչ է միայն Թիֆլիզ քաղաքի քահանալից վիճակագրութիւնը, որի վրայ բազմադիմի ազդեցութիւններ են եղել և ցալսօր իսկ Թիֆլիզն իրեն արժանաւոր քահանալիսկան դասակարգ չունի. անշուշտ եմ, որ ինքը գերապատիւ հեղինակն ալսօր գոհ չի լինիլ իւր իսկ ձեռնադրածներից անենից։

Ենորհապարտ ենք սրբազանին այն կոնդակի արտատպութեան համար, որ գրել է Մակար Կաթողիկոսը մայիսի 2-ին 1886 թ. Ը. 251. Այս մի կոնդակն արժէ մի ամբողջ գիրք, ինչպիսին է սրբազանի տիսերկը։ Ցաւում եմ, որ տեղը չէ ներում այդ կոնդակն

ամբողջովին յառաջ բերելու, երկու խօսքով դրա իմաստը հետևեան է. ոչ ոք չէ արգելում առաջնորդին իւր նկատած անկարգութիւնները բառնաւէ և բարեկարգել եկեղեցին, ընդհակառակն ալդ նրա պարտքն է: Կասկածական է կոնդակի խօսքերը. «Մեք զայտագիրն զայն... համարեցաք ոչ իրեւ ծրագիր, որ նորօրինակ ինչ թուի մեզ, այլ իրեւ ընդհանուր տեսութեամբ նկարագիր աննախանձելի դրութեան եկեղեցեաց, ոմանց եկեղեցականաց, վանօրէից և արգունի դպրոցաց վիճակիդ Տիխիսալ, զորս Տարը էր և իսկական պորտէ ընդարձակութեամբ սրբազն վայելուչ է համարել այս տողեկարգութեան առանց ենդրելը և մէնց շահածումն»:

Գրքի գլ. Դ. սկսում է դարձեալ մի անապացուց մեղադրութեամբ և շարունակուում այն անտրժան մեղադրանքների կրկնութեամբ, որ մի անգամ արդէն տպագրել էր տեղակալութեան «Արարատը»: Արիստակէս սրբազնը վայելուչ է համարել այս տողերս «1888 թուին անկարող լինելով տանելու Սրբազնագոյն Քահանայապետի անձամբ Թիֆլիզում արած մի քանի տղօրինէ խորդադրութեանները...» Այս ձևով անփաստ վիրաւորանքը մի հանգուցեալ Քահանայապետի դէմ, առնուազն անվայելուչ է: Սրբազնի առաջնորդութեան նախանձորդների մասին գրածներն ևս այս կարգին դասել պէտք է, չեմ հերցում, որ կարող էին Վրաստանի թեմի գահին բաղացողներ լինել, սակայն արժէր բերնէ բերան տարածուող բամբասանքներին տեղ տալ մի շարդրութեան մէջ, որ կամենում է լուրջ լինել: Հապաթէ ուրիշներն ևս այլ բամբասանքներ յառաջ բերէին, ս. էջմիածնի նիւթական վիճակի համար կոկորդիկոսէ արտասուրքներ թափողներին լիշեցնէին «Գրիգոր Լուսաւորչի Լուսաւորչի» խնդիրը, որի իրականանալուն մի առաջնորդ դէմ կացաւ, քանի որ ինքը չէր կաթողիկոս Սակայն բամբասանքը թէև միշտ սիրելի է եղել վանականներին, այսուամենայնիւ աննորժան է պատմութեան մէջ տեղ բռնելու: Վերին աստիճանի անախորժ տպաւորութիւն է թողնում կրկին վեհարանից ծախուած գինու շիշերի և լոբու մասին գրածները, աւելի հետա-

քըքէր էի Սրբողանի սինօդական դառնալու խնդրին, որի մասին մի խօսք անգամ ըլ գտալ այս էջերում: Սինօդի հաշիւները ցոլց են տուել արդէն և ոպագալին ամէնքը կիմաննան, որ Մակար Կաթողիկոսի ժամանակն էջմիածնի նիւթական շահերն աւելի էին պահպանուած քան երբէք: Մակարն բաւ է, այս ձեռվ եթէ շարունակեմ, թերևս քննադատելի գրքից աւելի մէծ գիրք գրելու ստիպուիմ, նմուշի համար ալսքանս էլ բաւ է:

Սրգոյ հեղինակը քննելով անցեալ դարու բոլոր մեր հալրապետների գործունէութիւնը, արձանագրում է, որ Կազբեցին լայտնի է իրեւ ապիկար և վնասակար, Ներսէս Աշտարակեցին ոչինչ չէ արել քահանայական խնդրի մասին, Մատթէոսը թոյր և վնասակար է եղել, Գէորգն ու Մակարը կաշառների գուռն բանալով լցրել են եկեղեցին ագէտներով, այս ճանապարհն է բռնել և Հայրիկը: Այս նշանակում է, ոի սկզբանէ էր խաւար և ոգի Արխստակէս եպիսկոպոսի լուսաւորէր ի վերայ ջուրցոյ: Մակայն այդ է ճշմարտութիւնը:

Միթէ ճշմարիտ է, որ հայոց եկեղեցին միայն մի փառաւոր շրջան է ունեցել մի տմբողջ դարու շրջանում և այն շնորհիւ հայ եպիսկոպոսներից ամենից անգրագէտի և ժամանարութեան արուեստով հոչակաւորի: Ափսոս, որ Սրբաղանը մոռացել է լիշտակելու, որ երբ իւր հոչակաւոր ծրագիրն ընդունուեցաւ սինօդից և ուղեցոյց որոշուեցաւ, Բնշապէս կատարուեց Ծիրանաւորի քահանայի ձեռնադրութիւնը, որի պատճառաւ ինքն ստիպուեցաւ ուղևորուել Հին Նախիջևանի կողմերը...

Դառնամ ալժմ բուն խնդրին: Ցիրաւի մեր քահանայական դասը բարձր գիրք չունի, նրա անդամների մէջ տգէտներ և անարժաններ շատ կան, սակայն մեր քահանայական դասը ոչ մի կերպ յետ չէ ժողովրդից, նա ժողովրդի ծնունդ է, երկուսի էլ կրթական վիճակի մակերևոյթը մի է, Ամբողջ գիւղեր անգրագէտ են, ունինք և շատ անգրագէտ քահանալիք, քաղաքներում և աւաններում ժողովուրդը քաղաքակրթուած է, ունինք քաղմաթիւ կրթուած հովիւներ ևս: Ցանկալի է, որ քահանալիք բարձ: լինին ժողովրդից, շատ բարձր, սակայն

ալդ ցանկութիւնը քivum desiderium է և կը մնալ ալդ.
պէս գեռ երկար ժամանակ:

Ալդ ցանկութիւնն իրականացնել չի լինիլ որոշ
կան, քաղաքական և բարոյական պատճառները, որոնցից
միայն մէկն է աչքի առաջ ունեցել հեղինակը: Այս
առթիւ չերկարացնելով խօսքս, ընթերցողի ուշագրու-
թիւնն եմ հրաւիրում պ. Ա. Արասխանեանցի քննու-
թեան վրայ, որ ապուեցաւ «Տարազում» այս գրքիս առ-
թիւ: Սխալուում է արգոյ հեղինակը կալծելով որ մեր
անցեալ դարու հայտապետները ոչինչ չեն արել ալդ
խնդրի համար, նրանք մեծ գործ են կատարել, որովհետեւ
խնդրն արմատիցն են բռնել և ոչ ծալրերից: Ներսէ ս-
Աշտարակեցաւ հիմնած դպրոցը մեզ ցարդ բազմաթիւ
քահանալք է տուել, նրան ենք պարտական մեր կը ը-
թուած քահանալից $60^{\circ}/\circ$, նոյնը կատարել է Մատթէոս
կաֆողիկոսը մեր ժողովրդական դպրոցի դռները լայն
բանալով, ոչ նուազ մեծ գործ է կատարել Գէորգ Պ.
Ճեմարան հիմներով, որից թէ քահանալք են ելեր և
թէ կուսակրօններ, որոնք պիտի բռնեն այն ամենե-
ցուն տեղերը, որոնք Աստուծոյ շնորհը վաճառում
են: Այս ընթացքին հետևել են և յաջորդ երկու հայ-
րապետները, բայց ոչ մի վէրք միանգամից չի բուժ-
ւում, մասնաւանդ եթէ դա հին է: Եթէ այս հալրապետ-
ների ժամանակ եղել են տգէտների ձեռնադրութիւն-
ներ և նոյն իսկ ջատագովութիւն տգէտների ձեռնա-
դրութեան, դրա պատճառն այն է, որ չի կարելի Մես-
սիակի գալստեան սպասելով բոլոր մարզարէներին կոտո-
րել. Արիստակէս Արբազանը չի հաւատում, որ Աստուծ
անպիտան անօթներն ևս իրեն գործիք կարող է շինել և
վերջապէս ձկնորս առաքեալներին յետոյ յաջորդեցին
Պօղոսներ և ապա գիտնական Որոգինէսներ, Բարսեղ-
ներ, Գրիգորներ... Անշուշտ մենք անցել ենք միան-
գամ ալդ շրջանը, բայց ո՞վ է մեղաւոր, որ պատմական
հանգամանքները մեզ կրկին գլորել են տգիտութեան
անդունդը:

Այս ամենից յետոյ յանձնարարում ենք հայ ըն-

թերցողին այս գիրքը, որի մէջ նա կըտեսնէ մասամբ
իւր և իւր հոգեոր դասի թերութիւններն ու մանը,
մարդկալին հաշիւներն, իսկ պատմական սխալներն ու
խեղաթիւրումները ժամանակը կըսրբագրէ:

Թող ներեն ընթերցողներու, որ այս անգամ աւելի
կանգ առալ կրօնական խնդիրների վրայ, բայց առ-
թից օգտուել պէտք էր, քանի որ մեր հրապարակա-
գրութեան մէջ շատ խնդիրներ միակողմանի միաւն կա-
րող են լուսաբանուել վերջին տարիններս:

Դառնամ բանասիրութեան: Այս նուագ քիչ երե-
ւոլթներ պիտի արձանագրեմ. աչքիս առաջ երկու գիրք
ունիմ միայն, Ա. Հ. Եփրիկեանի սլատկերազարդ յնաշ-
խարհիկն և Լեռն Մսերեանցի բարբառախօսութեան
թարգմանութիւնը: Վենետիկի և Վենենալի միիթարեան-
ները վաղուց արդէն սովորութիւն են դարձել մոջեան
աշխատասիրութեամբ ի մի հաւաքել հայութեան մա-
սին գրուածներն և տապա հատոր առ հատոր լոլս ըն-
ծալել, շնորհապարտ ենք նրանց այդ մասին: Հ. Եփ-
րիկեանի աշխատութեան Ա. պրակը արտառած է
Բամավէպից և բովանդակում է իւր մէջ Ա. տառի մի
մասը: Բնաշխարհիկը պարզաբար ալբութենական կար-
գով մի բառարան է հայկական աշխարհագրական վալ-
քերի: Այդ բառարանի առաւելութիւնն այն է, որ իւր
մէջ ամփոփում է բոլոր հին ու նոր տեղեկութիւններն
հայկական վայրերի մասին հանդիրձ մատենագիտու-
թեամբ, սրանով բառարանիս արժէքն աւելի ևս մե-
ծանում, որովհետև այդ մատենագիտութիւնը միջոց է
տալիս ստուգելու և լնդարձակելու լիշուած տեղեկու-
թիւնները: Մի խօսք արժէ ասել պատկերների մասին,
որովհետև դրանք միշտ խսկական պատկեր չեն լիշուած
վայրերի և շէնքերի, այլ հանուած են զանազան ժա-
մանակներում և զանազան արժէք ունեցող շարադրու-
թիւններից: Այս բառարանս աւարտուելուց լետոյ զարդ
կարող է լինել ամեն մի հայկական մատենագրարանի:

Պ. Լ. Մսերեանի ներածական բանախօսութիւնը
շեշտում է հայկական լեզուաքննութեան մէջ բարբառ-
ների ուսումնասիրութեան նշանակութիւնը, որ վաղուց

արդէն ցոլց է տուել հանգուցեալ Ք. Պատկանեանը, որին և հեղինակը մատուցանում է արժանի յարգանք-ները, Բարբառների ուսումնասիրութիւնը շատ աւելի լետ է մնացած մեր բանասիրութեան մէջ քան այլ խնդիրները։ Ցարդ եղած հետազօտութիւններից աչքի ընկնողներն են պլ. Սարդս Շանի Ագուլեաց բարբառի ուսումնասիրութիւնն և Հախվերդեանի Թիֆլիզի բար-բառի ուսումնասիրութեան փորձը, նորերս առանձնա-պէս հայստացաւ մեր բարբառախօսութիւնը Մսերեան-ցի Մշու բարբառի հետազօտութեամբ, որն ափսոս որ հիմնուած է գաղթականների լեզուից քաղած նիւթի վրայ։ Նոյն խնդրավ զբաղուում է և երիտասարդ բանա-սէր Աճառեանը, որ սկսել է ուսումնասիրել Արցախե-ցոց բարբառը։ Սակայն այս ամէնը դեռ բարբառագի-տութեան փորձեր են, ցանկալի է, որ մեր բարբառնե-րով շատ աւելի նիւթեր հրատարակուէին իբրև նիւ-թեր լեզուաբանական ապագալ քննութեանց համար։

Բանաստեղծական երկերով հարուստ չէ մեր գրա-կանութիւնը, հետզհետէ երևան եկող երևոյթներն ևս աղքատիկ ու խղճուկ են, միակ բանաստեղծական տետ-րակը, որ մեր առջևն է, արտատպուած է «Լումալից»։ Մեր նորագոյն բանաստեղծներից պլ. Յարութիւն Թու-մանեանցը դեռ ևս զարգացման աստիճանի վրայ է, նրա փորձերը նոյն աւանդական վիպական շրջանումն են։ Մելիք-Խւսութը մի յանդաւոր վիպական պատմուածք է մեր նոր անցեալից, մելիքների վերջին մաքառման շրջանից, բայց ափսոս, որ բանաստեղծի երևակայու-թիւնը թույլ է և գրեթէ առանց գիւտերի։ Երիտասարդ բանաստեղծի մէջ կայ մի առկալծուող կրակ, որ պէտք է վառել ու բորբոքել, խորհուրդ կը տալինք պլ. Թու-մանեանցին չըշտապել հրատարակելու իւր այս փորձերն, այլ ճգնելու ճոխացնել և կոկել ալդ նիւթերը։

Ցարդ չենք ունեցել մէնք սպասաւորակն գրակա-նութիւն, կարող եմ շնորհաւորել, որ ալդ երևոյթն ևս ալժմ աեղի է ունեցել այլ կերպ դժուար է որո-շել պլ. Մելիք-Ս. Դաւիթբէկի «Լուսինեանք» կոչուող գրական արտադրութիւնը։ Փորձենք մի վայրկեան որո-

շելու ալդ գրուածքի տեսակը։ Հստ երևութին դա
պատմական շարագրութիւն կամ մենագրութիւն է Լու-
սինեանց տոհմի մասին, ինչպիսիք շատ կան եւրոպա-
կան գրականութիւնների մէջ զանազան հին ազնուա-
կան ցեղերի մասին, բայց նրանք հիմնուած են անժըս-
տելի պատմական վաւերականների վրայ, մինչ այս երկի
պատմական հնագոյն հատուածներն իիրաւի քաղուած
են հին պատմական աղբիւրներից և վերաբերում են
ստորգ իրողութիւնների, իսկ վերջին գլուխները, որոնց
նպատակն է ապացուցանել Գալֆանների Լուսինեանց
ցեղից լինելուն, անհիմն և կարկատան հիւսուածքներ
են մի տոհմի և մի անձի մասին։ Թէ ինչու համար նախ-
կին Ամբրոսիոս և Խորէն վարդապետները կարևոր են
համարել իրենց Լուսինեան ճանաչեցնել տալու, պարզ
է, մարդկալին սնափառութեան տեսակէտով, իսկ
թէ ինչու պ. Գաւիթքրէկ նրանց ալդ ցանկութեան
պատմական իրողութեան նշանակութիւն է կամենում
տալ, մեզ անհասկանալի է, նոյն իսկ այս մաքուր, իշ-
խանական ծախիւք տպագրուած գիրքը կարդալուց յե-
տու։ Իրողութիւնը շատ պարզ է, մուժ եղածն ևս
գիրքն է պարզում, որ կրօնաւորի սքեմը թողած Ամբ-
րոսիոս վարդապետը հարուստ կին առնելով իրեն իշ-
խան է կամենում ճանաչեցնել տալ մի ալդպիսի երկ-
րում և բաղաքում, ուր իսկական իշխանները արհա-
մարհում են իրենց տիտղոսները։ Մեզ համար Ամբրո-
սիոս և Խորէն Գալֆանները աւելի յարգի և աւելի պա-
տուարժան են իրեւ հայ գրականութեան յալտնի մշակ-
ներ քան թէ իբրև իշխանական սերնդի որդիք։ Բեռ-
լինի վեհաժողովի ժամանակից Գալֆանները ցանկութիւն
ունեցան Լուսինեան հոչակուելու, թերևս կարծելով՝
թէ նոր գահը պիտի թափուր մնալ և ժառանգորդպէտք-
է հին հայկական թագի... Յիշում եմ, որ այս անուա-
նափոխութեան առթիւ հանգուցեալ Գալֆիէլ եպիսկո-
պոս Ալվազովսկին զալրացել էր և նամակով իսկ գրել
իւր նախկին ընկերներին։ Ափսոս, որ կորել է Ալվազովս-
կու նամակների պատճէնների ժողովածուն, որ նրա ան-
տիպ երկերի հետ էջմիածին էին տարուել։ Զարմանալի

թեթևամտութեամբ Սան Ստէֆանոյի դաշնագրի 16.ըդ յօդուածն ևս միմիայն Խորէն եպիսկոպոսի ջանքերի ար. դիւնք է հռչակուած (եր. 73), ինչ միամտութիւն:

Բնական և բժշկական գիտութեանց զըշանից երկու տետրակ պիտի արձանագրենք այստեղ, մին Կ. Պօլիս Հրատարակուած և միւսը Բագու, Բժիշկ Խւթիւնանի «Առողջապահ Հութեան առաջնորդ» կոչուած մատենագարանի խոստացուած 40 հատորներից առաջինը կրում է «Ատամունք» վերնագիրը: Այս փոքրիկ տետրը բաղկացած է 56 փոքրադիր երեսից, որոնցից առաջինը ձօն է, երկրորդը պարապ, երրորդն ուղղուած է ազգային ուսումնական վարչութեան ատենապետին (պոլ. սեցիք ալլ կերպ գերք հրատարակել ըլ գիտեն), չորրորդը պարապ է, հինգերորդը ազգային պատրիարքարանի թուղթն է, վեցերորդը պարապ, իններորդից մինչեւ 12 ազդ, 13 - 14 եր. լառաջաբան, բուն նիւթը գրաւում է եր. 15 - 49. 50 եր. պարապ է, 51 - 52 ծանուցումն կամ լանձնարարութիւն է ատամ մաքրելու գեղերի: Զը նստելով այսպիսի աւելորդ ծանրութեամբ բեռնաւորութեան, տետրակո իբրեւ ամենատարական ծանօթութիւններ ատամների խնամքի համար կարող է օգտակար լինել ժողովրդին:

Կ. Տիմիրեագեվի Զարլզ Դարվինի մասին 1878 թ. կարդացած դասախոսութեան հալերէն թարգմանութիւնը տալիս է մեզ ոմն Ս. Տէր Գասպարեան, շնորհակալ լինինք, որ պարոնը ցանկութիւն է ունեցել լրացնելու մեր գրականութեան թերին և բնական գիտութեանց այս հսկայի մասին թարգմանել է մի դասախոսութիւն, որ գրուած է երկու տասնեակ տարի առաջ, սակայն ինչ լանդիմանութիւններով է համեմում պարոնը իւր այս թարգմանութիւնը, ինչպէս ասում են, նա մի շաւլուառա՞ է հայերիս, որ գեռ չունինք դարվինական գրականութիւն: Պարոն թարգմանիչը ոչ միայն անձանօթ է հայ գրականութեան, նա ըլ գիտէ ամենեին և հայերէն լեզուն, տէր Աստուած, երբ պիտի ազատուի խեղճ հայերէն լեզուն այս նահատակութիւնից, թարգմանիչ պարոնը 8 երես լառաջաբանի մէջ մի կատարեառ լուսն ու.

աւերմունք է գործում հայերէն քերականութեան, թէ
ինչպէս կատարած կը լինի թարգմանութիւնը, այդ
ինքն ըստ ինքեան հասկանալի է: Ցաւում ենք,
որ պիտի հիասթափումն պատճառենք պարսնին, նա
իւր նպատակին չէ հասել, լառաջաբանն ու թարգմա-
նութիւնը հայերէն հասկանալի դարձնելու համար
պէտք է թարգմանել հայերէնի: Նետաքրքրուղը թող
կարգայ լառաջաբանի հէնց առաջին պարբերութիւնը,
որ մենք տեղի սղութեան պատճառով չենք կարող ար-
տատպել: Զարմանեալի ձգուումն ունի թարգմանիչը բա-
ռերն ազատաղելու, օրինակ՝ «բաւարարեցուցիչ», «ան-
քակելի», «արմատախլութիւն», «արգանքալից» և այլն:
Եատ ափսոս, որ այս թէպէտ և հնացած, բայց գեղե-
ցիկ բանախոսութիւնը բառարանի օդնութեամբ և տա-
ռացի թարգմանուած լինելով՝ չէ կարող Դարվինի մա-
սին հայ ընթերցողի ծանօթութեանց պաշարն աւելացնել:

Աերջին ժամանակներս մեր մանկական զրադարա-
նը բաւական հարստացաւ, ասաց տարի առաջ հայ ծնող-
ներն ու մանկավարժները զուր էին փնտուում մանկա-
կան ընթերցանութեան համար հայերէն գրքեր, որոնց
ցանկը մի երկու տասնեակից աւելի չէր, այն ևս ըստ
մեծի մասին անյարմար և կարիքից ստիպուած միայն
ընդունուած գրքերից կազմուած: Ալժմ մի ամբողջ ման-
կական մատենադարան ունինք, որ մասսամբ պարտական
ենք մեր հանգուցեալ Հրատարակչական ընկերութեան.
ոչ ալդչափ միայն, մեր մանկավարժներից մէկը, պ. Յ.
Տէր Միքաքետնը մի բաւական ստուար հատոր է հրա-
տարակել դեռահասների ընթերցանութեան մասին, ո-
րին կցել է և մի ցուցակ իրեն ծանօթ մանկական գըր-
քերի, որոնց նաև գնահատել է «ընտիր», «միջակ»,
«անպէտք» մակդիրներով: Այս ուղեցոյցը մի էր միշտ
ցիս (հաւաքումն) է զանազան մանկավարժական բա-
ռարաններից ու նման՝ գրքերից՝ գրօւած է սահուն
լեզուով, բայց գժբախտաբար երկարաբան և կրկնու-
թիւններով լի ոճով: Գալով գրքերի ցանկին, դա շատ
թերի է, զարմանքով պիտի ասենք, թէ չենք հասկա-
նում ինչպէս կարող էր հեղինակը մոռանալ Քամալեանց

Սի ընտիր հեքիաթներն ու նման շատ գրքեր, ալդ թերին շատ է նուազեցնում ցանկի արժեքը:

Մանկական գրադարանն հարստացել է երկու փոքրիկ տեսքակով. «Պառաւ ծիտը» և «Ի՞նչ է ասում սենեակը», վերջինս կարող է երկրորդ թարգմանութիւն համարուել, որովհետեւ Յ. Տէր Միբաքեանի ցանկի մէջ № 82 նոյն գուածքը նշանակուած է «Ի՞նչ է խօսում սենեակը» աւելի լաջող թարգմանած վերնագրով: Պ. Տէր Միբաքեանը այս գլոբիս մասին ասում է. «Ճեզ չէ», ես կաւելացնեմ, որ զուրկ է խսկական մանկական գրուածքի առաւելութիւններից, շինծու և անքնական եղանակով պատմուած, որ մանուկներին կը ձանձրացնէ: Թարգմանութիւնն անխնամ է կատարուած, ուամկուկան ոճերի հետ կան զուտ օտարաբանութիւններ, տնալակաս են և սխալները, օրինակ՝ «կամ Ծ կոշին է պատմուած, կամ միւս»: «ուանդապով ուսնգեց», «գլուխը գովելու իրաւունք ունիմ», «տանել կուռասէր առ ժոռի ծաղը»: «Երկաթը ծաւալուոց է»⁽¹⁾, «ընէ ծ էնիտ ժարէ անձունինի էրակերպն», «մարգիկ իրանց հարմենիը մաքուը պահեն», «շարպան», «ժոնդ պալիս», «մէ և նոյն ժամանէ սկսեց լուսանալ»:

Մամին-Միբիլեակի-Պառաւ ծիտը թարգմանութիւն է Եղիսաբէթ Սարգսեանի. գրուածքն իբրև մանկական ընթերցանութեան նիւթ անարժէք է, եթէ ալ. Տէր Միբաքեանի ձևով ասնլու լինենք, պիտի նշանակենք ուանանձին արժեք չունի», «շատ միջակ է» և ալին. թարգմանութիւնը շատ թերութիւններ ունի, սա մի խսկական բառացի թարգմանութիւն է, որ պէտք է վերածել հալերէնի: Ահա լառաջ եմ բերում մի քանի օրինակ այս թարգմանութիւնից, որ ընթերցողն ինքը դատէ. «Ծ և նոյն(Յ) է, բան չի ոս-րո գոյ(Լ)», «ոսրոստ էլլի բայրուա էրույլ», «արկղ Երկնօթէ ԿՏՈՒՐՈՎ« (Քրիստո)!», «Դէ շուտ, ալ կնիկ, հաւաքուիր» (օօ- ծուրուս), «հին բոյնից հանել բերել էին բուրուս», «որ օդը սուլում էր»⁽²⁾: Տասն և չորս երես մանկական գրուածքն աւելի խնամով պէտք էր թարգմանել, մանաւանդ որ ալդ թարգմանութիւնը առատ վարձա-

տրուած է Ա. Պօղոսեանի գրամագլխի հաշուին:

Ժողովրդական ընթերցանութեան համար ընտիր նիւթ է ոքիշկ Հատազ^նի կենսագրութիւնը, որ փոխադրութիւն է ուստերէնից կատարուած բժ. Վ. Արծրունու ձեռքով ու տպագրած հրատարակչական ընկերութեան միջոցներով:

Ժողովրդական ընթերցանութեան նիւթ կարող է լինել և պ. Ցակոր Աղամեանի Ազատ ժամերը[”], որի մէջ զետեղուած է նաեւ Սենկելչի ՝ Հետեւենք նրան[”] գողտրիկ շարադրութեան թարգմանութիւնը[”] : Այս փոքրիկ բայց ընտիր վէպն ալնքան հաճելի է եղել մեզ հալերիս, որ երեք անգամ թարգմանուել է, ամենից առաջ ՝ Արձագանք[”]ում, ապա առանձին գրքովկով 1896 թ., իսկ աւս երրորդն է[”]: Թարգմանութեանս լեզուն բոլորովին տարբերուում է պ. Աղամեանի ինքնուրոյն շարագրութեան լեզուից, արժէր համեմատել երեք թարգմանութիւններն ես, բայց ձեռքի տակ չունիմ միւս երկուսը:

Ազատ ժամերի խրատները մի գրական արուեստամիրի (dilettante) գործ են, որի գրական արժէքը շատ քիչ է, բայց հետաքրքրական են իբրև մեր հին սերնդի մտածողութեան և նրանց հետաքրքրող խնդիրների նկարագրութիւնն:

Վերջին տարիներս մի շարք բանակոռուական տետրեր է սկսել հրատարակել պ. բժ. Ս. Շահ-Նազարը, դրանց մի քանիսի մասին առիթ եմ ունեցել խօսելու արդէն ՝ Լումայի[”] նախընթաց համարներում, ալժմ աչքիս առջևն է ՝ Մշակը[”] 189⁶/, թ.թ. կուսակցական պալքարը, որի մասին մի որոշ կարծիք յալտնելը բաւական գժուարին է, որովհետև հեղինակի առաջադրած խնդրի քննութիւնն ես թերի և անորոշ: Նախալիդ լինչ կուսակցական պալքար է 189⁶/, թ.թ. յատուկ, ինչքան լիշում եմ, ալդ թուականներին այն պալքարը, որ յալտնի է մեր մէջ իբրև լրագրական կուսակցու-

¹⁾ Որքան գիտենք երկրորդ թարգմանութիւնն էլ պ. Աղամեանի ձեռքով է կատարած:

թիւնների պալքար, բաւական սառել էր և բնորոշ ոչ
մի յատկանիշ չուներ, դա շարունակութիւն է այն
պալքարի, որ ալդ լրագիրն սկսել է իւր ծննդեան օ-
րուանից և վարում է ցարդ։ Ես ալդ պալքարի ե-
ղանակի ու նպատակի մէջ ոչ մի զանազանութիւն
չեմ տեսնում, ուստի անկարող եմ 189⁶/7 թուականը
զատել իւր նախորդ և յաջորդ տարիներից։ Տետրակիս
մէջ բազմաթիւ ճշմարտութիւններ կան, սակայն ոչ
մէկը դրանցից նոր չէ, ինչպէս հեղինակն ինքն էլ խոս-
տպանում է, ալդ ճշմարտութիւնները քանիցո կրկնել
են Արձագանքն ու նոր Դարը, Հանդէս պատմական
և գրականական ու ալլք։ Փօխանակ բանակուական
լոդուածներից անթիւ ցիտատներ հանելու, արգոյ հե-
ղինակը գեղեցիկ գործ կատարած կրինէր, եթէ լուրջ
հետազոտողի պէս տռնէր իւր քննադատած լրագը 25-ամեալ համարները, ցոյց տար նրա կատարած դրա-
կան և բացասական գերը, ապա թէ ոչ ում համարեն
գաղանիք հոչակաւոր թաշիրբաշու շահատակութիւն-
ները, որ նոյն խմբակցութեան անդամներից շատ շա-
տերի համար այժմ բոլորովին պարզ են։

Քանի որ խօսքիս ընթացքն հասաւ լրագրութեան,
կամենում եմ օգտուել առիթից ու մի քանի խօսք ա-
սել և pro domino երկու քննադատութեանց առիթիւ,
որ «Մշակի» երկու խմբագիրները գրել են ինձ դէմ¹⁾։
«Լումայի» վերջին համարին պարսաւանք գրելու տես-
չով վառուած, ալդ լրագրում մապաստանարան գոտած յայտ-
նի վիպասան, քաղաքագէտ, հրապարակախօս և այլն և
այլն պ. Լէօն չէր մոռացել և ինձ, աննշանակ անար-
գական խօսքերից յետոյ պարոնը խծրճել էր և իմ լե-
զուիս առիթիւ մի քանի նախադասութիւն յառաջ բերե-
լով Զմշկիկի պատմութիւնից։ Այդ նախադասութիւննե-
ների բոլոր թերութիւնն այն էր, որ պ. Լէօն չը գիտէ
հայերէն լարաբերական (որ) գերանուան կանոնը և տե-
ղեկութիւն չունի նախադասութեանց անդամների ըստ

¹⁾ „Ախողրադով, դասագիրք ընդհ. պատմութեան մասն
Գ. նոր-Դար. Բագու. 1900. 379 եր.

մտաց (իտապա սիւնէսէն) համաձայնութեան մասին:

Նոյն սխալանքները գտել է իմ լեզուիս մէջ «Մշակի» միւս քննադատ պ. Տ. Յ. որ մի ընդարձակ լառաջաբանով և վերջաբանով քննութիւն է տպագրել Մշակի անցեալ տարրուան № 247-ի մէջ:

Այդ քննադատութեան ձև կրող, բայց կուսակցական ստոր գիտումներից բղխած տողերն ամենից գեղեցիկ կերպիւ կըդատապարտուին իրենց ոճով: Մեծ պատիւ է անում ինձ պարո՞ն Տ. Յ. պահպանողական կուսակցութեան սիւն, կուռք և այլ կոչումներ տալով, այդ բառերը մատնում են միայն նրա կրքերն, որոնց պատրաստում է յագուրդ տալու: Այդպիսի և աւելի ևս հշական ճամարտակութիւններ սովոր ենք լսել պ. Տ. Յ.-ից, որին գեռ ուսանող ժամանակ «Արձագանքում» գասեր են տրուած իւր սանձարձակ լեզուի համար: Այդ հին վրէժն այժմ մասսամբ ինձնից է լուծում պարոնը, մոռանալով որ սենք հաւասար գէնքեր չունինք այժմ:

Պարոն քննադատս երեք լրագրական սիւնակի համար նիւթ ժողովելիս անգամ սխալուել և մի բառի տեղ մէւսն է տրտագրել, պրոտեկցիոնիստն ես չեմ թարգմանել վաճառականութիւն և չէի էլ կարող թարգմանել այդպէս, ես այդ խնամակալութիւն եմ թարգմանել: Եթէ պարոնը չարամտութեամբ չէ գրել այդ տողը, ընդունում եմ, որ աչքի կամ գրչի սխալ է այդ, ուրեմն չը պիտի զարմանալ, որ երեք սիւնակի մէջ սխալուելն երբ հնարաւոր է, աւելի ևս 400 երեսանոց գրքումը կարող են լարսաներ լինել, ինչպէս է իսկապէս և ուրօրոշական ու վարչական գործ գործ մէջ, որի համար շնորհապարտ եմ իրեն: Ընդունում եմ նոյնպէս, որ մի թարգմանութեան մէջ գործ դրուած բառերի փոխարէն կարող են՝ աւելի յարմարագոյնները լինել, սակայն դրանով չի ապացուցուիլ, որ թարգմանութիւնն անպէտք է:

Գալով քննադատութեան առանձնակի կէտերին, պիտի լիշեմ նախ, որ իմ պատճառովս Վինոգրադով պրոֆէսորին էլ վատաբանել է պարոն քննադատը, ինչ

մեղք ունի լալտնի ոսւս գիտնականը, որ մի մշակականի չի չաջողուել նրա երկի հայերէն թարգմանութիւնը, չի որ գուշ ինքներդ առաջարկել էիք հրատ. ընկերութեան թարգմանել նոյն դաստագիրքը: Ֆրանսիական հին պառլամենտ կոչուող դատարանական հաստատութեան մասին երկար դասախօսութիւն կարգալու կարիք չունէր պ. Տ. Յ. նոյնը նա կարող էր կարգալ և իմ թարգմանութեան մէջ, ուր ոչ ոք չի կասկածիլ, որ ազգային ժողով կոչուող հաստատութիւնն ալդ շըր-ջանում, ալդ թուականում դատական հաստատութիւն էր: Սխալուում է պարոնը կարծելով, որ ֆիզիոկրատ բառն ես եմ թարգմանել «բնութեան իշխան», ալդ թարգմանութիւնը միշիթարեաններին է, թող տեսնի նորարիի բառարանում, ինքս էլ չեմ հաւանել ալդ թարգմանութեան և գրել եմ փակուցմի մէջ, որ քննադատու բաց է թողել Պէտք:

Ինչ կը վերաբերի պարոնի չը հաւանած բառերին, դրա մասին վիճելն աւելորդ է, ես կարծում եմ, որ «կատարելահասակ» աւելի ճիշտ է քան «չափահաս», «կանգ առնել տալ» աւելի լաւ է քան «կանգնացնել», որ ուրիշ նշանակութիւն ևս ունի: Ցարաբերական դերանուան կանոնը, որ գալթակղութեան քար է դարձել, առաջարկում եմ կարգալ Զալըխեան Ալինեանի քերականութեան մէջ եր. 340 յօդ. Է. նոյնը և զարգացելոց ու տարերքի մէջ. Հայերէնի մէջ որ լազարերականը եղական ձեսվ յոգնակնի նշանակութիւն ունի: Ճողովածուածուածու բառը հաւաքական լինելով նրա լազարերականը կարող է ըստ մուս (էստոն սինէսէն) դրուել յոգնական ձեսվ: Դպրոցականներն անգամ գիտեն, որ պատմական ոճի մէջ անցեալ կատարեալը փոխարինում է կատարեալին և ընդհակառակն, նայելով նկարագրի ոճին, ուրեմն ալդ ոսերէն չգիտենալու հետևանք չէ, մանաւանդ որ ես ոչ քերականութիւն եմ թարգմանել և ոչ բառարան կազմել, այլ պատմական մի գրուածք եմ վերածել հայերէն լեզուի:

Ցանցանքներից մեծագոյնն է եղել ամեն բառ հայացնելը, դա ընդունում եմ և դիմամբ եմ արել,

որտեղ էլ անձեռնհաս եմ գտնուել, շատ եմ ափսոսացել: Օտար բառերի տառադարձութեան մէջ լիրաւի սանսիւրիսմի փոխարէն գըել եմ սանսիւրալիզմ ուսերէնի ազդեցութեան տակ, սակայն միթէ ալդ իրաւունք է տալիս քննադատին դատելու իմ ֆրանսերէնի դիտութեան մասին: այդ նոյնը կը լինէր, եթէ մէկը ֆրանսերէն լեզուի հեղինակաւոր ուսուցիչ ներկալանար այն պատճառով, որ զանազան լանձնաբարութիւններով ֆրանսիական Զուիցերին է գնացել մի երկու անգամ: Հայոց պատմութեան լաւելուածը քննադատը ողորմելի է կոչում, ամեննեին դադախար չունենալով դրա ծաւալի և նշանակութեան մասին, եթէ ընդհ. պատմութեան մէջ զուգընթացաբար աւելացնում են հայոց պատմութիւն, դա պէտք է իւր ծաւալով և ծրագրով համապատասխանի ընդհանուր բովանդակութեան, «Ճռ. խացրեց» բառի իմաստը սահմանափակում է պլ. Տ. Յ. ինքնակամ կերպով: Ամենից լաւ մատնում են պլ. քըննադատին իւր վերջին խօսքերը: նա զարդացած է, որ այդ հատորը տպագրուած է մի մեկենասի ծախքով և լայտնուած է, թէ մեր մէջ հեշտ է հրատաշակիչ գտնել անպէտք գրքի համար, իսկ գժուար բան է, կարգին գրքի համար հովանաւոր (Պ) և հրատարակիչ գտնել: բոլորովին համաձայն եմ, վերջին տարիներս հրատարակչական ընկերութեան այդ ուղղութեամբ գործունէութիւնը ես եմ արձանագրել, ալժմ աւելին կասեմ, մեր մէջ շատ աւելի հեշտ է պէտք ունենալ ընդհանուր վարձատընթեան ստանալ, քան տքնաշան տշխատութեամբ վարձատընթել: Եթէ մեր ալժմեան հրապարակագրութեան մենավաճառներն այս ուղղութեամբ շարունակեն իրենց քնն սդատութիւնն, այն ժամանակ գրագէտներին յ նումէ կրկնել Քայիլովի առաջի խրատը: «Ըզմեզ ալ դնւն փըրկէ Աստուած, կոշտ ու տգէտ գատաւորաց»: Այս վիճակից կազատուէինք, եթէ ամսագրութիւն ունենալինք, սակայն ամսագիրների մասին այլ անգամ: